«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Կոնֆլիկտային փոխհարաբերությունների առաջացման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները դեռահասության տարիքում

ԱՌԱՐԿԱ՝ Մաթեմատիկա

ՀԵՂԻՆԱԿ՝ Նունիկ Սիմոնյան

ՔԱՂԱՔ՝ Երևան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Երևանի թիվ 112 ավագ դպրոց

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն……3

1. Կոնֆլիկտի ընդհանուր բնութագիրը և ժամանակարգությունը……5
2. Կոնֆլիկտների առաջացման սոցիալ-հոգեբանական պատճառները դեռահասության տարիքում……10

Եզրակացություն……19

Գրականության ցանկ……21

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Յուրաքանչյուր հասարակության մեջ գրեթե միշտ անխուսափելի են կոնֆլիկտները և կոնֆլիկտային փոխհարաբերությունները: Այսօր, մեր հասարակությունում մեծ խումբ են կազմում դեռահասները, և այս շրջանում առաջացող կոնֆլիկտները գրեթե իրենց մոտ միշտ ակտուալ են, քանի որ դրանց նպաստում են սոցիալ-հոգեբանական մի շարք գործոններ: Սոցիումը մեծ ազդեցություն է թողնում յուրաքանչյուր անհատի վրա՝ թե մեծահասակների, և թե դեռահասների: Հասարկությունն իր հերթին դառնում է նպաստող գործոն դեռահասի այս կամ այն հատկության դրսևորման կամ չդրսևորման համար:

Իմ կողմից ընտրված թեմայի արդիականությունը անմիջականորեն կապված է ներկայիս ժամանակահատվածի հետ, քանի որ այսօր դեռահասների կողմից ստացված սխալ ինֆորմացիայի մեծաքանակ հոսքը, մեծահասակների և դեռահասների միջև անբարենպաստ հարաբերությունները, հասակակիցների շրջանում ոչ կայուն հարաբերությունները և մրցակցությունը, առաջնորդ լինելու ցանկությունը, հաճախ հանգեցնում է կոնֆլիկտային փոխհարաբերությունների առաջացմանը և ձևավորմանը: Կոնֆլիկտները հասարակության մեջ մարդկանց փոխգործակցության կարևորագույն կողմն են, սոցիալական կեցության բաղադրիչն են, հետևաբար դրանց մասնակից են դառնում նաև դեռահասները, քանի որ նրանք զգալիորեն տարբերվում են հասարակության զարգացման մակարդակից: Դեռահասության տարիքում տեղի է ունենում խմբի պատկանելության փոփոխություններ՝ դեռահասները գտնվում են երեխաների խմբից մեծահասակների խումբ սոցիակալան շարժման մեջ, ինչն էլ նպաստում է կոնֆլիկտայնության առաջացմանը: Առաջնային է նաև հասկանալ դեռահասների շրջանում տիրող կոնֆլիկտների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, ինչը նաև հիմք է հանդիսանում ընտրված թեմայի հետազոտության շրջանակներում:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել և վեր հանել դեռահասների շրջանում կոնֆլիկտային փոխհարաբերությունների առաջացման պատճառները և դրանց սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները:

Նպատակին հասնելու համար առաջադրել եմ հետազոտության հետևյալ խնդիրները՝

1) Վերլուծել հիմնախնդրի հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը։
2) Վերլուծել և մեկնաբանել դեռահասության տարիքում արտահայտված կոնֆլիկտների առաջացման պատճառները։
3) Պարզել դեռահասների բնավորության շեշտվածությամբ պայմանավորված կոնֆլիկտները։

Կոնֆլիկտի ընդհանուր բնութագիրը և ժամանակարգությունը

<<Կոնֆլիկտ>> հասկացությունը շրջանառության մեջ է մտել 19-րդ դարի սկզբին: Կոնֆլիկտ բառը ծագել է լատինական confliktus բառից, որը հունարենից թարգմանաբար նշանակում է՝ բախում: <<Կոնֆլիկտ>> հասկացությունը սահմանվում է որպես երկու և ավելի անձանց միջև համաձայնության բացակայություն կամ երկարատև, բաց, հաճախ կրկնվող պայքար երկու կողմերի միջև: Կոնֆլիկտը մարդու մշտական ուղեկիցն է, ըստ էության, գոյություն ունենալու համար պայքարի ձևերից մեկն է, բնական ընտրության մեխանիզմներից մեկը, որը մեզ լիովին ստիպում է բացահայտվել հակառակորդի դեմ պայքարում: Ժամանակակից հասարակության կյանքում կոնֆլիկտը դառնում է առօրյա կյանքի նորմ [11, էջ 6]:

Կոնֆլիկտաբանության այս խնդիրը արդիականացվում է այն պատճառով, որ այսօր ժամանակակից երիտասարդ սերունդները չեն կարող իրենց գործողությունները համաձայնեցնել այլ սերունդների հետ, հրաժարվելով կամավոր ճանաչման բարոյական նորմերից, որոնք անխուսափելիորեն առաջացնում են հակամարտություններ՝ սոցիալական տարբեր մակարդակներում: Կոնֆլիկտաբանությունը հնարավորություն է տալիս անհատին կամ սոցիալական խմբին ավելի լավ կողմնորոշվել կյանքի բարդությունների մեջ, փնտրել օպտիմալ լուծումներ կոնֆլիկտային իրավիճակներում, գտնել առավել արդյունավետ մեթոդներ և օգտագործել կոնֆլիկտների կանխարգելման ուղղիները: Կոնֆլիկտաբանությունը ինքնուրույն գիտություն է, որը ծագել է սոցիոլոգիայի, հոգեբանության և հոգեբուժության հանգույցից: Այն համարվում է միասնական գիտական համակարգ՝ ոչ մի կապ չունի հետազոտական հակամարտության հետ, որը ընթանում է ռազմական գիտությունների, պատմության, մաթեմաթիկայի, մանկավարժության շրջաններում: Որոշ կոնֆլիկտաբաններ այն սահմանում են որպես <<Սոցիալական պատճառների, ձևերի, հակամարտությունների և դրանց լուծման, կանխարգելման ուղղիներ>>: Կոնֆլիկտաբանությունը՝ հասարակագիտության և մարդագիտության ոլորտ է: Կոնֆլիկտաբանությունը օրինաչափությունների և մեխանզիմների մասին գիտելիքների համակարգ է, նրանց ծագման, զարգացման, ինչպես նաև դրանց կառավարման տեխնոլոգիա: Այսպիսով, կոնֆլիտաբանության մեջ ուսումնասիրության առարկա է հանդիսանում կոնֆլիկտների բնույթը, պատճառները,

տեսակները և դինամիկան, ուղիները, մեթոդները և դրանց կանխարգելման միջոցները [11, էջ 7-9]։

Կոնֆլիկտներին ուշադրություն են դարձրել այնպիսի նշանավոր մտածողներ, ինչպիսիք են՝ Պլատոնն ու Արիստոտելը։ Նրանք կարծում էին, որ մարդն իր բնույթով հասարկական էակ է, որը ներկայացնում է հասարակության մի մասը և մարդու մեջ դրված սկիզբը նրան հնարավորություն է տալիս հասականալ և համագործակցել այլ մարդկանց հետ։ Դա չի բացառում նաև թշնամանք, ատելություն, բախում, և կոնֆլիկտների առաջացում։ Բնության, հասարակության, մտածողության հակասությունները, դասակարգերի և պետությունների միջև պայքարը, այս ամենը միջնադարի փիլիսոփաների մտորումների առարկան էր։ Այսպիսով, մինչև 19-րդ դարի 20-ական թվակնները կոնֆլիկտը դիտարկվում էր ընդհանուր առմամբ, որպես հակամարտության դրսևորումներից մեկը, կամ բախումների առանձին տեսակների վերլուծության առումով, օրինակ, դասային կոնֆլիկտները։ Կոնֆլիկտի ընդհանուր հայեցակարգի մշակման նկատմամբ հետաքրքրություն առաջացավ նախ և առաջ սոցիոլոգիայում և հոգեբանության մեջ։ Կոնֆլիկտաբանության հիմքը դրվել է սոցիոլոգիայի դասականների մասնակցությամբ, ինչպիսք են՝ Օգյուստ Կոնտը, Հերբերտ Սպենսերը, Կառլ Մարքսը։ Ըստ Էմիլ Դյուրքհեյմի՝ <<Մարդիկ միավորվում են հասարակության մեջ, ոչ թե հանուն անհատական խմբակային թշնամանքի, այլ միմյանց փոխադարձ կարիքի պատճառով>> [11, էջ 10-11]։

Ն. Գրիրշինան իր՝ <<Կոնֆլիկտների հոգեբանություն>> գրքում նշում է կոնֆլիկտների հետևյալ սահմանումները՝

1) Աններդաշնակ վիճակ, մարդկանց միջև հարաբերությունների, գաղափարների, շահերի, օգուտների բախում։
2) Մտավոր պայքար, որն առաջանում է ցանկությունների, կամ տենդենացիաների միաժամանակ գործունեության արդյունքում։
3) Հուզական լարվածություն, որը առաջանում է հակառակ ազդակների բախման, կամ իրականության, բարոյական, սահմանափակումների հետ ներքին ազդակների համաձայնեցման հաշտեցնելու անկարողության հետևանքով [8, էջ 16]։

Ըստ որոշ հեղինակների՝ <<Կոնֆլիկտ հասկացությունը ներառում է վեճ, մրցակցություն, պայքար և մարտարվեստ, որը առաջանում է մրցակիցների բախման և աղմուկների հետևանքով>>: Նշված կանոնների վերլուծությունը, ցույց է տալիս, որ <<կոնֆլիկտ>> հասկացության գլխավոր բաղադրիչը ընդդիմադիր ուժերի բախումն է: Կոնֆլիկտ տերմինը համեմատաբար ուշ է ընդգրկվել գիտական գրականության մեջ, այս եզրույթը առաջին անգամ հայտնի է դարձել Ջոն Դաքիայի <<փիլիսոփայություն և հոգեբանություն>> հրատարկված հայտնի եռահատորում՝ 1901 թվականին: Հետագայում այս հասկացությունը լինում է խնդրահարույց դաշտում և ինտենսիվորեն սկսում է ընդլայնվել: Հոգեբանության մեջ <<կոնֆլիկտ>> հասկացությունը նույնպես լայն է կիրառված և անդրադառնում է տարբեր երևույթների առացաջմանը և ուսումնասիրությանը: Այս հասկցությունը օգտագործվում է նկարագրելու համար խմբի վարքագիծը, անհատների վարքագիծը, օրինակ՝ անհատների միջև մրցակցությունը: Կոնֆլիկտների վերաբերյալ հոգեբանության մի շարք վերլուծություններ ցույց են տվել, որ <<Կոնֆլիկտ են անվանում միջանձնային դժվարություններն ու միջանձնային ապրումները, ճգնաժամային երևույթները, որոնք առաջացնում են երեխայի մոտ ուսումնական խնդիրների բախում>> [8, էջ 15-19]:

Ըստ Ն. Գրիշինայի՝ կոնֆլիկտը հասարակության մեջ մարդկանց փոխգործակցության կարևորագույն կողմն է, և սոցիալական կեցության բաղդրիչն է: Կոնֆլիկտը սոցիալական գործողությունների պոտենցիալ կամ ակտուալ սուբյեկտների միջև հարաբերությունների ձև է, որոնց մոտիվացիան պայմանավորված է արժեքներով և նորմերով, շահերով և կարիքներով: Անցուպովը և Շիպիլովը բերելով կոնֆլիկտի մի շարք բնորոշումներ, հանգում են այն մտքին, որ <<Կոնֆլիկտը անձի ենթակառույցների միջև պայքար է>>: Այս սահմանման մեջ ուշադրություն է դարձվում հեղինակների դիրքորոշումներում կոնֆլիկտի՝ որպես փոխադարձաբար ապակառուցողական երևույթի գնահատման ուղղությամբ տեղաշարժերին, ինչը ենթադրում է կոնֆլիկտներից խուսափելու անհրաժեշտություն: Բ. Հասանը՝ կոնֆլիկտների հայտնի հետազոտողներից մեկը, առաջարկում է կոնֆլիկտ հասկացության հետևյալ սահմանումը՝ <<Կոնֆլիկտը փոխգործակցության այնպիսի ձև է, որտեղ գործողությունների հստակ լուծում չունենալը հանգեցնում է օգուտների, շահերի բախմանը>>: Միևնույն ժամանակ ցանկացած կոնֆլիկտ ակտուալացված

հակասություն է, այսինքն՝ փոխգործակցության մեջ մարմնավորված հակադիր արժեքները, շարժառիթները [8, էջ 20-22]։

Կոնֆլիկտները սոցիալական կյանքի անբաժան և օրինաչափ մասն են։ Կոնֆլիկտը դիտարկվում է որպես նախորդ զարգացման ապակազմակերպման վիճակ և նոր կառույցների սկզբնաղբյուր, որպես երկու օբյեկտների փոխազդեցություն, որոնք ունեն անհամատեղելի նպատակներ և դրանց հասնելու միջոցներ։ Նման օբյեկտների դերում կարող են հանդես գալ առանձին մարդիկ, խմբեր, սոցիալական ինստիտուտներ, պետություններ և այլն, որոնց գործունեությունը կապված է կազմակերպման և կառավարման խնդիրների առաջադրման և լուծման, որոշումների կայացման, նպատակամիտված գործողությունների ծրագրման հետ [2, էջ 12]։

Կոնֆլիկտը փոխազդեցության սուբյեկտների՝ հակադիր ուղղված նպատակների, շահերի, տեսակետների, հայացքների, շարժառիթների բախումն է։ Կոնֆլիկտային փոխազդեցության դեպքում կողմերից յուրաքանչյուրը ջանքեր է ձեռնարկում, որ գերակայի իր տեսակետը, մոտեցումը, նպատակը, և միաժամանակ խոչընդոտում է մյուս կողմին անելու նույն բանը։ Կոնֆլիկտը մերկացնում է կողմերի միջև հակասությունները ամենից առաջ նպատակների, արժեքների ոլորտում և լուծվող խնդրի էության հասկացման առումով։ Այսպիսով, կոնֆլիկտը խմբում հակամարտող կողմերի համար հոգեբանորեն կարևոր իրավիճակ է, որը բնութագրվում է հակասությամբ և հակադրությամբ և պահանջում է խմբի անդամների որոշակի ակտիվություն դրանց հաղթահարման և լուծման համար։ Համաձայնության բացակայությունը պայմանավորված է տարաբնույթ կարծիքների, հայացքների, գաղափարների, շահերի և այլնի առկայությամբ։ Սակայն դրանք ոչ միշտ են արտահայտվում ակնհայտ բախման, կոնֆլիկտի ձևով [2, էջ 13]։

Լ. Բոժովիչը իր՝ <<Անձի ձևավորման խդիրները>> գրքում նշում է, որ կոնֆլիկտը երկու կամ ավելի կողմերի միջև համաձայնության բացակայությունն է, որը կարող է ուղղված լինել կոնկրետ անձի կամ խմբերի։ Յուրաքանչյուր կողմ անում է ամեն ինչ, որպեսզի ընդունի իր տեսակետն ու նպատակը։ Կոնֆլիկտը անցանկալի երևույթ է, և երբ առաջանում է պետք է անհապաղ լուծել, բայց շատ իրավիճակներում օգնում է բացահայտել տեսակետների բազմազանությունը, տալիս է լրացուցիչ

տեղեկատվություն և օգնում է բացահայտել ավելի շատ այլընտրանքներ։ Կոնֆլիկտը մարդկանց կամ խմբերի միջև իրական պայքար է, անկախ նրանից, թե որոնք են այդ պայքարի ակունքները։ Կոնֆլիկտը տարաձայնությունների ձևերից մեկն է, միևնույն ժամանակ սոցիալականացնող ուժ է, որը միավորում է կողմերին և նպաստում է հասարակության կայունացմանը։ Ըստ Պ. Սորոսկինի՝ կոնֆլիկտայնությունը կապված է մարդու կարիքների բավարարման հետ և կոնֆլիկտայնության աղբյուրը կայանում է մարդու հիմնական կարիքները ճնշելու մեջ, առանց որի բավարարման, մարդը չի կարող գոյություն ունենալ [6]։

Ա. Դմիտրևը իր՝ <<Կոնֆլիկտոլոգիա>> գրքում նշում է հետևյալ սահմանումը՝ <<Կոնֆլիկտ>> հասկացությունը սահմանվում է, որպես օբյեկտիվ կամ սուբյեկտիվ հակասությունների դրսևորում, որը արտահայտվում է կողմերի հակամարտությամբ։ Այլ կերպ ասած, կոնֆլիկտը մի գործընթաց է, որտեղ երկու կամ ավելի անհատի կամ խմբի միջև ակտիվորեն փնտրվում է հնարավորություն՝ խանգարելու միմյանց [9, էջ 53]։

Ըստ Սաֆյանովայի՝ <<Կոնֆլիկտը շփման մեջ բռնի միջանձնային հակամարտություն է՝ գիտակցորեն ոտնահարելով գործընկերոջ արժանապատվությունն ու կարիքները>>։ Ըստ հեղինակի՝ կոնֆլիկտը տեղի է ունենում միայն այն ժամանակ, երբ ոտնահարվում է առնվազն մեկ անձի արժանապատվությունն ու կարիքները՝ հաղորդակցման սուբյեկտների կողմից։ Կոնֆլիկտային փոխհարաբերություններում յուրաքանչյուր ոք իր սեփական դաշտում ձգտում է հասնել հաջողության և խոցել հակառակորդին [9, էջ 63]։

Կոնֆլիկտն իրենից ներկայացնում է ակտուալացված հակասություն, այսինքն՝ փոխազեդության մեջ մարմնավորված հակադիր արժեքներ, կայանքներ, շարժառիթներ։ Սովորաբար հակասությունն անպայման պետք է մարմնավորվի բախման գործողությունների մեջ։ Ուստի կարելի է պնդել, որ կոնֆլիկտի նպատակը և դրական գործառույթները կայանում են նրանում, որպեսզի նրա միջոցով հնարավոր լինի լուծել մեր կյանքում առաջացող հակասությունները։ Կոնֆլիկտների գրեթե բոլոր հետազոտողները կարծում էին, որ կոնֆլիկտի գլխավոր գործառույթը բախված ուժերի միասնությունն ապահովելն է, նույնիսկ, եթե այն հասնում է փոխգործակցության՝

մասնակիցներից մեկի ոչնչացման գնով։ Այս առումով հատկանշական է կոնֆլիտների և արդյունավետ շփման բավականին կարծրատիպային հակադրումը, որը բերում է Ե. Ի. Իվանովին։ Նա մասնավորապես գրում է՝ <<Մարդկանց միջև կոնֆլիտները սովորական երևույթներ են, և երբեմն նրանք նույնիսկ դրական նշանակություն ունեն>>։ Արևմուտքում կոնֆլիկտների լուծման ամենահեղինակավոր ձեռնարկներից մեկի հեղինակ Մ. Դոյչը նշել է, որ <<Կոնֆլիկտի դրական հետևանքներն առանձին մարդու համար կարող են լինել այն, որ դրա միջոցով ներքին լարվածությունը կսպառվի և կմաքրվի>> [7, էջ 56]։

Կոնֆլիկտների առաջացման սոցիալ-հոգեբանական պատճառները դեռահասության տարիքում

Դեռահասության շրջանը բուռն, սուր և բարդ ժամանակահատված է երեխաների համար։ Մանկությունից դեպի դեռահասություն անցման բարդությունները առաջացնում են հոգեկան նոր նորագոյացություններ։ Այս ժամանակահատվածում հասակակիցների շրջանում տեղի է ունենում ինքնահաստատում, բողոք՝ մեծահասակների դեմ, նրանք ունենում են այս շրջանում ուժեղ զգացմունքներ, սուր ապրումներ։ Այս փուլում տեղի է ունենում ինտենսիվ զարգացում, իսկ տեղի ունեցող փոփոխությունները անձի ձևավորման մի մասն են կազմում։ Դեռահասության շրջանում հիմնական առաձնահատկությունը՝ անկայունություն է [14, էջ 74]։

Ինչպես նշում է Կ. Ն. Պոլիվանովան՝ այս տարիքում մեծահասակների հետ հարաբերությունները հաճախ հանգեցնում են դեռահասների հետ կոնֆլիկտի, քանի որ նրանք ձգտում են ինքնուրույնության, ինքնահիրացման, խնամքից ազատվելու։ Քննադատաբար իմաստավորելով իրենց և շրջապատի մարդկանց՝ դեռահասը բողոքում է մեծահասակներից և հաճախ երևակայական խաղեր խաղում։ Դեռահասը ձգտում է ոչ միայն ուշադրություն դարձնել, այլև ձեռք բերել մեծահասակների վստահությունը, նա ձգտում է որոշակի սոցիալական դեր խաղալ ոչ միայն հասակակաիցների շրջանում, այլև մեծահասակների շրջանում։ Արդյունքում մեծահասակների և դեռահասների միջև աճում է հոգեբանական պատնեշ, որը, ձգտելով հաղթահարել, շատ դեռահասներ դիմում են նաև կոնֆլիկտային վարքագծի

ձևերին։ Հետևաբար, դեռահասների մոտ ձևավորվող բարդ և հակասական հատկանիշները, նրանց զարգացման ներքին և արտաքին նախադրյալները առաջացնում են խանգարող իրավիճակներ, և այդ իրավիճակները ստեղծում են բազմաթիվ օբյեկտիվ նախադրյալներ կոնֆլիկտայնության առաջացման և դրսևորման համար։ Կ. Ա. Կրուտեցկին կարծում է, որ <<Դեռահասության տարիքում տեղի է ունենում որոշ արժեքների վերակողմնորոշում՝ դեպի այլ արժեքներ>>։ Դեռահասները ձգտում են նոր սոցիալական դիրքորոշման, որը համապատասխանում է այն կարիքներին և հնարավորություններին, որոնց նա ձգտում է։ Պատահական չէ, որ դեռահասների կոնֆլիկտայնության ակունքները, որպես կանոն ձևավորվում է ընտանիքում, նրա անդամների հետ հարաբերություններում՝ վեճերը, երեխայի մերժումը, հարկադրանքը, այդ թվում՝ պատիժ, վախ և այլն [14, էջ 83]։

Ըստ Տ. Պ. Ավդուլովայի՝ դեռահասության շրջանում կենտրոնական փոփոխություն է համարվում հոգեբանական հասունացումը, որն անմիջականորեն ուղեկցվում է կոնֆլիկտային իրավիճակների առաջացմամբ։ Այլ կերպ ասած, դեռահասների կոնֆլիկտների առաջացման պատճատները պայմանավորված են նրաց ֆիզիկական և հոգեկան զարգացմամբ, որոնք ընթանում են անհավասար։ Հաճախ, կոնֆլիկտների պատճառ են հանդիսանում նրանց շրջապատը և հարազատների հետ շփումը, իսկ հասակակիցների հետ հաղորդակցվելու գործառույթը ուղղված է ներքին լարվածության ազատմանը, որը պայմանավորված է հորմոնալ փոփոխությամբ կամ սոցիալական գործոնով։ Հատկապես վառ է դրսևորվում հասակակիցների հետ առաջնորդության համար պայքարը, որը հանդիսնաում է նրանց կոնֆլիկտների պատճառներից մեկն։ Առավել հաճախ կոնֆլիկտներ են առաջանում ընտնաիքում, հատկապես երբ ծնողները հաշվի չեն առնում երեխայի մեծացումը։ Այսպիսիով, չափազանցված սպասումները, անհանդուրժողականությունը, ոճ կառուցողական պահվածքը, ընտանիքում բացասական միկրոկլիման, վստահության բացակայությունը, ծնողական ավտորիտարիզմը, դպրոցում ծագող խնդիրները, պատճառ են հանդիսանում հոգեբանորեն և հոգեպես վերափոխվող դեռահասների կոնֆլիկտների առաջացման համար։ Հետազոտությունները ցույց են տալիս, որ դեռահասների

կոնֆլիկտայնությունը միջնորդավորված է սոցիալական և հոգեբանական գործոններով:

Կ. Լևինը <<Դեռահասության տարիքի դաշտի մոտեցման>> տեսությունում վերլուծեց դեռահասների կոնֆլիկտային տեսակները՝ դեպի հասունության անցման տեսանկյունից, ըստ որի նրանք միաժամանակ զբաղեցնում են երեխաների և մեծահասակների խումբը: Հեղինակը կարծում է, որ դեռահասության տարիքում տեղի է ունենում խմբի պատկանելության փոփոխություն, այսինքն՝ դեռահասները գտնվում են երեխաների խմբից մեծահասակների խումբ սոցիալական շարժման մեջ, ընդ որում նրանք ձգտում են տեղափոխվել մեծահասկների խումբ և օգտվել որոշ արտոնություններից: Հետևաբար, այս ամենը հիմք է ստեղծում կոնֆլիկտների առաջացման համար: Հեղինակը իր աշխատանքներում անդրադարձ է կատարել դեռահասների շրջանում առաջացող դժվարությունների աստիճանին և կոնֆլիկտների առկայությանը: Ըստ հեղինակի՝ այն կախված է հասարակության մեջ երեխաների և մեծահասակների խմբի տարանջատման և այս ժամանակահատվածի տևողության միջև: Այս խմբի տարանջատման փաստը ժամանակակից հասարակության մեջ հանգեցնում է դեռահասների զարգացման և դաստիարակության մեջ կոնֆլիկտների և դժվարությունների օրինաչափությանը, որը պայմնավորված է դեռահասների կյանքի սոցիալական հանգամանքների առանձնահատկությամբ:

Ա. Վ. Պետրովսկին իր՝ <<Տարիքային և մանկավարժական հոգեբանություն>> գրքում նշում է, որ դեռահասության փուլի սկզբում ստեղծվում է հակասություններով լի իրադրություն, հատկապես, երբ մեծերը շարունակում են դեռահասի հետ վարվել այնպես, ինչպես փոքր երեխայի հետ: Հենց այս հակասությունն է այն կոնֆլիկտների և դժվարությունների աղբյուրը, որոնք բնորոշ են մեծահասակների ու դեռահասների հարաբերությունների համար, երբ նրանք տարբեր պատկերացումներ ունեն դեռահասի իրավունքների և ինքնուրույնության մակարդակի մասին: Հաճախ մեծի դիմադրությունը դեռահասի կողմից պատասխան վերաբերմունք է առաջ բերում, որը դրսևորվում է անհնազանդության ու բողոքի ձևով, այդ հակասական միտումների ու փոխադարձ դիմադրության գոյությունը առաջացնում է բախումներ: Այս իրադրության պահպանման դեպքում նախկին փոխհարաբերությունների վերացումը կարող է

տևական բնույթ ստանալ, զբաղեցնել դեռահասության ողջ փուլը և շարունակական կոնֆլիկտի ձև ընդունել: Կոնֆլիկտային փոխհարաբերությունները նպաստում են վարքի հարմարվողական մեխանիզմների առաջացմանը և դեռահասի ազատագրմանը: Առաջ են գալիս օտարացվածություն, համոզվածություն, որ մեծերը անարդարացի են: Սրա հիման վրա առաջանում է չափահասների պահանջները, գնահատականները, հայացքները չընդունելու գիտակցված միտում, որի հետևանքով ծնողներն ու ուսուցիչները կարող են ընդհանրապես կորցնել դեռահասի անձի բարոյական ու սոցիալական դիրքորոշումների ձևավորման այդ պատասխանատու փուլում նրանց վրա ազդեցություն գործելու հնարավորությունը: Կոնֆլիկտը հետևանք է այն իրողությանը, որ մեծահասակները հաճախ չեն կորողանում կամ չեն ցանկանում իրենց կողքին նոր տեղ գտնել դեռահասի համար: Հետևաբար՝ դեռահասության շրջանում կոնֆլիկտանյին փոխհարաբերությունները նաև առաջանում են մեծահասակների հետ փոխհարաբերությունների արդյունքում [3, էջ 141-142]:

Ըստ Լ. Ի. Բոժովիչիչ, Լ. Ս. Սլավինայի և այլոց կարծիքով՝ դեռահասության շրջանում կոնֆլիկտայնությունը առանձնահատկություն է և դրանց առաջացման հիմնական պատճառը նրանց հակումներն են: Դրա հիման վրա առանձնացնում են դեռահասների կոնֆլիկտայնության երկու հոգեբանական պատճառներ՝

1. Հոգեբանական պատճառները՝ պայմանավորված են դեռահասի անձի առանձնահատկություններով՝ սեռատարիքային առանձնահատկությունները, ներընտանեկան զարգացման իրավիճակը, նրանց շփումը մեծահասակների և հասակակիցների հետ, ինչպես նաև բնավորության շեշտադրումը և այլն:

2. Սոցիալական պատճառները՝ մակրո և միկրո գործոններն են: Այս պատճառները ներառում են դեռահասների սոցիալական փորձը՝ սոցիալական անիրազեկությունը, սոցիումում նրանց դերը, դպրոցում նրանց հարաբերությունները ուսուցիչների և հասակակիցների հետ, մանկավարժական կառավորումը և ուսումնական հաստատություններում ծագող, առաջացող խնդիրները [5, էջ 41]:

Ըստ Ա. Անցուպովի՝ դեռահասության շրջանում կոնֆլիկտային փոխազդեցությունը տեղի է ունենում երեք փոխկապակցված համակարգերում՝

1) <<Դեռահաս-ծնող>> փոխհարաբերությունները,
2) <<Դեռահաս-ուսուցիչ>> փոխհարաբերությունները,
3) <<Դեռահաս-հասակակից>> փոխհարաբերությունները։

Հեղինակը կարծում է, որ դեռահասների և ծնողների միջև կոնֆլիկտների պատճառները պայմնանավորված են կրթության թերություններով, դեռահասների մտավոր զարգացման անհատական հոգեբանական փոփոխություններով և մեծահասակների անհատական առանձնահատկություններով։ Դեռահասների կոնֆլիկտային վարքագիծը տեղի է ունենում այն ժամանակ, երբ հաշվի չեն առնվում նրանց անհատական առանձնահատկությունները, տարիքային և ֆիզիոլոգիական փոփոխությունները, և երբ մեծահասակների հաղորդակցմա ձևը և բովանդակությունը չեն փոխվում նրանց հանդեպ [5, էջ 41-42]։

Ա. Անցուպովը իր՝ <<Դպրոցական կոլեկտիվում կոնֆլիկտների կանխարգելումը>> գրքում նշում է, որ դպրոցում դեռահասների կոնֆլիկտների առաջացման պատճառներից մեկը միջանձնային հարաբերություններում ի հայտ եկող կոնֆլիկտներն են։ Հենց միջանձնային հակամարտություններից է՝ դեռահասների սոցիալականացման գործընթացը, որը ենթադրում է տարբեր տեսակի կոնֆլիկտներ։ Բացի այդ նրանք իրենց հետ դպրոց են տանում վերափոխված ձևով մեր հասարակաության բոլոր սոցիալական հակասությունները։ Այնուամենայնիվ, սոցիալ-հոգեբանական թվին են դասվում կոնֆլիկտների այն պատճառները, որոնք պայմնավորված են դեռահասների փոխազդեցությամբ, ինչպես նաև սոցիալական խմբերում նրանց ընդգրկման գործոնով։ Այդպիսի պատճառներից են նաև միջանձնային և միջխմբային հողորդակցման գործընթացում դեռահասների ստացած տեղեկատվության հնարավոր զգալի կորուստները և խեղաթյուրումները։ Դեռահասների կոնֆլիկտների սոցիալ-հոգեբանական պատճառը միջանձնային կոնֆլիկտներում անհավասարակշիռ փոխգործակցությունն է՝ դեռահաս-ուսուցիչ, դեռահաս-մեծահասակ, դեռահաս-հասակակից հարաբերություններում։ Դեռահասների և ուսուցիչների փոխհարաբերությունների սխալ ընբռնումը կարող է դառնալ դպրոցում կոնֆլիկտների հիմնական պատճառ կամ կարող է այլ պատճառներով առաջացած սոցիալական հակասաությունները բարդեցնել [5, էջ 43]։

Դեռահասների և ուսուցիչների միջև փոխգործակցության ընթացքում առաջացող կոնֆլիկտները ըստ մի շարք հոգեբանների՝ Վ. Ի. Ժուռավլյովի, Մ. Մ. Ռիբակովի, Վ. Ի. Միտյուկի, պայմանավորված են դեռահասի տարիքային առանձնահատկությունների, անհատական առանձնահատկությունների, ինչպես նաև նրանց անտեսման նախապայմանով: Դեռահասների հետ վերաբերմունքը որոշ ուսուցիչների կառուցում են այնպես, ինչպես օրինակ կրտսեր դպրոցականների, ցածր դասարանում սովորող երեխաների հետ: Նրանց կառավարման ավտորիտար ոճը, նրանց տեսակետը հասկանալու, և իրենց հասակակիցների շրջանում դրսևորելու ձգտումը, հանգեցնում է միջանձնային կոնֆլիկտների: Ուսուցիչները պետք է հանդուրժող և նրբանկատ լինեն դեռահասների նկատմամբ, քանի որ նրանց բնավորության շեշտադրումը բնույթով չափազանց խոցելի, տպավորիչ, վիրավորվող, կոնֆլիկտող են: Հաճախ ուսուցիչները դեռահասներին կոպիտ նկատողություններ են անում, նսեմացնում են ընկերների առջև, նույնիսկ ծնողներին են մաղադրում և վիրավորում, որի արդյունքում առաջանում է կոնֆլիկտային իրավիճակ երկու կողմերի միջև [10, էջ 80]:

Ինչպես նշեցինք, դեռահասները հոգեբնական և սոցիոլոգիական տեսանկյունից հասարակության մեջ մեծ խումբ են, և ունեն իրենց յուրահատուկ սոցիալական և հոգեբանական հատկությունները, որոնց առկայությունը սահմանվում է, ինչպես տարիքային առանձնահատկություններով, այնպես էլ նրանց սոցիալ-տնտեսական, հասրակական-քաղաքական վիճակը, նրանց հոգևոր աշխարհը, դեռևս գտնվում է կայացման, ձևավորման վիճակում: Ինչպես մեծերի հետ փոխհարաբերությունները, այնպես էլ դպրոցում հասակակիցների և ուսուցիչների հետ շփումը, առանց կոնֆլիկտների չի լինում: Սովորաբար դպրոցում նրանց կոնֆլիկտները բազմապլանային և բազմաբնույթ երևույթ է:Դեռահասության տարիքում դպրոցական կոնֆլիկտների առաջացման երեք հիմնական խմբեր կան՝ արժեհամակարգային կոնֆլիկտներ, անձնային-հոգեբանական և ռեսուրսային կոնֆլիկտները [12, էջ 83]:

1. Արժեհամակարգային կոնֆլիկտները: Կոնֆլիկտների տարածված ձևերից մեկը, որը առաջանում է կրթական արժեքների միջև: Օրինակ, ծնողները ցանկանում են որ երեխան առաջին հերթին հնազանդ լինի, իսկ ոսուցչի համար կարևոր է, որ դեռահասը ունենա ստեղծագործական ինքնարտահայտման հնարավորություն,

արդյունքում առաջանում է կոնֆլիկտ ուսուցիչ-ծնող-երեխա հարաբերություններում։ Արժեհամակարգային կոնֆլիկտների մեջ են մտնում նաև, երբ դեռահասները ցանկանում են ստանալ գիտելիքներ և մտնել հեղինակավոր բուհ, իսկ մյուսները սովորել չեն ցանկանում և կարծում են, որ առանց գիտելիքի կարող են ապրել։

2. Անձնային-հոգեբանական կոնֆլիկտները։ Այպիսի կոնֆլիկտները հնարավոր են ուսուցիչների և դեռահասների միջև։ Վերջիններս առավել հաճախ կապված են առաջնորդության և ինքնահաստատման համար, ինչպես նաև հոգեբանական պայքարի հետ։ Օրինակ՝ երկու լիդեր դեռահասների առճակատումը։

3. Ռեսուրսային կոնֆլիկտները։ կոնֆլիկտների այս խումբը շատ հաճախ կապված է ինչ-որ սկզբունքային դեֆիցիտի հետ։ Դպրոցում՝ դեռահասների ռեսուրսային կոնֆլիկտների ռիսկը բավարար մեծ է։ Այսպիսի կոնֆլիկտների ժամանակ դեռահասների համար կարող են առիթ դառնալ գումարը՝ դրանց առկայությունը, սահմանափակումը և բաշխումը [12, էջ 84]։

Ինչպես նշում է Ի. Ս. Կրուտկոն՝ դպրոցական կոլեկտիվում դեռահասների և հասակակիցների միջև ձևավորվում են <<առաջնորդներ և թույլեր>> խմբավորումները և սկսվում է պայքար նրանց միջև, ինչն էլ նպաստում է կոնֆլիկտային փոխհարաբերությունների առաջացմանը։ Դպրոցում նրանց սոցիալական դերի փոփոխությունը համընկնում է անցումային ճգնաժամի սկզբի հետ։ Եվ այս ժամանակահատվածում որոշիչ է դառնում նրանց համար հասակակիցների կարծիքը [12, էջ 85-86]։

Դեռահասների բնավորության շեշտվածությունը և կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության առանձնահատկությունները։ Կոնֆլիկտային իրավիճակներում վարքի որոշակի ոճի ընտրությունը պայմանավորված է ոչ միայն ստեղծված իրավիճակով և խնդրի էությունով, այլև կոնֆլիկտող դեռահասների անհատական հոգեբանական առանձնահատկություններով, այդ թվում նրանց բնավորության առանձնահատկություններով։ Շատ կորևոր տեղ է զբաղեցնում կոնֆլիկտային իրավիճակում անձի վարքի ռազմավարությունում միջանձնային հարաբերությունների արժեվորումը։ Շշետվածություն հասկացությունն առաջին

անգամ ներմուծվել է հայտնի գերմանացի հոգեբույժ Կառլ Լեոնհարդը։ Ըստ Լեոնհարդի՝ մարդկանց հասարակության կեսին բնորոշ է շեշտվածությունը [1, էջ 47]։

Ըստ Լիչկոյի՝ շեշտվածությունը կարելի է սահմանել, որպես բնավորության աններդաշնակ զարգացում, նրա առանձին գծերի ուռճացված դրսևորում, որը որոշակի ազդեցությունների պարագայում պայմանավորում է անձնավարության բարձր խոցելիություն և դժվարացնում է հարմարման գործընթացը [1, էջ 48]։

Լիչկոն կարծում է, որ բնավորության շեշտվածության մասին ավելի ճիշտ է խոսել դեռահասության տարիքում, իսկ ավելի վաղ տրաիքում դեռ բնավորության տիպը չի ձևավորվել և կարելի է խոսել միայան առանձին շեշտված գծերի մասին։ Առավել վառ դրսևորվելով դեռահասության տարիքում բնավորության շեշտվածությունը հետագայում, հարթվում կամ փոխհատուցվում է, սակայան կարող է նաև հակառակը լինել, վառ արտահայտված շեշտվածությունները կարող են վերաճել սոցիալական վտանգավորության աստիճանի, կամ դեռահասների մոտ առաջացնել կոնֆլիկտային վարքագիծ [4, էջ 7]։

Ըստ Լեոնհարդի հայեցակարգի՝ անձի կառուցվածքում որոշ ընդգծված հատկություններ որոշվում են որոշ բնավորության առանձնահատկություններով։ Ըստ Լեոնհարդի՝ բնավորության հատկությունների շեշտադրումը ներառում է՝ ամաչկոտ, ցուցադրական, մանրախնդիր, դյուրագրգիռ, կոնֆլիկտային տեսակի շեշտադրումները, որոնք հատուկ են նաև 14-18 տարեկան դեռահասների համար։ Ըստ Լիչկոյի մշակված հայեցակարգի՝ 14-18 տարեկան դեռահասների բնավորության շեշտվածությունը մեծ ազդեցություն է թողնում նրանց հոգեբանական առանձնահատկությունների վրա, որոնք կարող են հանգեցնել դեռահասի կոնֆլիկտային վարքագծին և փոխհարաբերությունների, ինչպես նաև վարքի սխալ կազմավորմանը [4, էջ 8]։

Լիչկոն իր՝ <<Հոգեպատիան և դեռահասների բնավորության շեշտադրումները>> գրքում նշում է, որ բնավորության առանձնահատկությունների տոտալությունը դեռահասների մոտ վառ է արտահայտված։ Դեռահասը բացահայտում է իր բնավորության տեսակն ընտանիքում, դպրոցում, հասակակիցների հետ շփման ընթացքում, ուսուցման պրոցեսում, ինչպես նաև հանգստի կամ զվարճանքի

սովորական պայմաններում, երբեմն էլ արտակարգ իրավիճակի պայմաններում։ Հաճախ նրանց բնավորության գծերը խանգարող գործոն են հանդիսանում հասկակիցների միջավայրում հարմարվողականության և շփման համար։ Սակայն, նրանց հարաբերությունները լի են կոնֆլիկտներով, որն էլ սահմանափակում է հարմարվելու ունակությունը։ Դեռահասության շրջանը երեխաների մոտ անցնում է անկանոն բնույթի հատկություններով։ Այս շրջանում տեղի են ունենում արմատական և անսպասելի փոփոխություններ ինչպես ֆիզիոլոգիական գործընթացում, այնպես էլ բնավորության գծերում և կոնֆլիկտային վարքագծում [13, էջ 3]։

Ըստ Լեոնհարդի՝ միայն իր բնավորության առանձնահատկությունների շնորհիվ դեռահասը իրեն բացահայտում է մարդկանց հետ փոխհարաբերություններում և նույնքան լարված կոնֆլիկների ընթացքում, որոնք պարզվում են ընտանեկան հարաբերություններում, ուսուցման պրոցեսում, հասակակիցների հետ շփման ընթացքում և սոցիալական ապրելակերպի ընթացքում [13, էջ 4-5]։

Եզրակացություն

Դեռահասների շրջանում կոնֆլիկտային փոխհարաբերությունների և դրանց առաջացման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների խնդրի վերաբերյալ գիտական գրականության վերլուծությունը մեզ թույլ է տալիս հանգել հետևյալ եզրակացությունների՝

1) Կոնֆլիկտները սոցիալական կյանքի անբաժան և օրինաչափ մասն են։ Կոնֆլիկտը դիրատրկվում է որպես նախորդ զարգացման ապակազմակերպման վիճակ և նոր կառույցների սկբնաղբյուր, որպես երկու օբյեկտների փոխազդեցություն։ Կոնֆլիկտները փոխազդեցուության սուբյեկտների հակադիր ուղղված նպատակաների, շահերի, տեսակների, հայացքների, շաժառիթների բախում է։
2) Կոնֆլիկտների առաջացմանը կարող են նպաստել՝ միջանձնային հարաբերություններում ծագող խնդիրները, միջխմբային կոնֆլիկտները, ներանձնային հարաբերություններում առաջացող խնդիրները, ինչպես նաև միջխմբային կոնֆլիկտները, որոնք կրում են տարաբնույթ երևույթներ։
3) Դեռահասության շրջանում կոնֆլիկտների առաջացումը պայմանավորված է տարբեր գործոններով՝ այս շրջանում կենտրոնական փոփոխություն է համարվում հոգեբանական հասունացումը, որն անմիջականորեն ուղեկցվում է կոնֆլիկտային իրավիճակների առաջացմամբ։ Այլ կերպ ասած, դեռահասների կոնֆլիկտների առաջացման պատճատները պայմանավորված են նրաց ֆիզիկական և հոգեկան անհավասարակշիռ զարգացմամբ, ինչը իրենից ենթադրում է, որ այս շրջանում կոնֆլիկտային փոխհարաբերությունների և կոնֆլիկտային վարքի առաջացումը կապված է՝ վարքի ոչ ճիշտ ռազմավարության ընտրությամբ՝ բարձր մրցակցություն, ցածր փոխզիջում, միջին հարմարում, և ընդգծված անհատական առանձնահատկությունների առկայությամբ՝ մասնավորապես բնավորության շեշտվածությունը։

4) Կոնֆլիկտային իրավիճակներում վարքի որոշակի ոճի ընտրությունը պայմանավորված է, և կապված է ոչ միայն ստեղծված իրավիճակով և խնդրի էությունով, այլև կոնֆլիկտող դեռահասների անհատական հոգեբանական առանձնահատկություններով, այդ թվում նրանց բնավորության առանձնահատկություններով, և ընդգծված անհատական գործոններով: Շատ կորևոր տեղ է զբաղեցնում կոնֆլիկտային իրավիճակում անձի վարքի ռազմավարությունում միջանձնային հարաբերությունների արժեվորումը:
5) Դեռահասների բնավորության շեշտվածությունը մեծ ազդեցություն է թողնում նրանց հոգեբանական առանձնահատկությունների վրա, որոնք կարող են հանգեցնել դեռահասի կոնֆլիկտային վարքագծին, կոնֆլիկտային փոխհարաբերություններին, ինչպես նաև վարքի սխալ կազմավորմանը:

Գրականության ցանկ

1. Հոգեբանություն և կյանք. 3/4 հատոր <<Տաթևիկ>> գիտակրթական համալիր. Եր. 2011
2. Նազարյան Ն. Մ. Կոնֆլիկտները և դրանց կառավարումը. Ուսումնական գործնական ձեռնարկ. Եր. 2016. - 306 էջ
3. Պետրովսկի Ա. Վ. Տարիքային և մանկավարժական հոգեբանություն. <<Լույս>> հրատարակչություն. Եր. 1977 - 307 էջ
4. Алексеева Е.А., Выбойщик И.В., Паршукова Л.П. Акцентуация характера: Учебное пособие. – Челябинск: Изд-во ЮУрГУ, 2002. – 47 с.
5. Анцупов А.Я. А74 Профилактика конфликтов в школьном коллективе. — М.: Гуманит. изд; центр ВЛАДОС, 2003. — 208 с. — (Б-ка школьного психолога)
6. Божович Л. И. Проблемы формирования личности: Избр. психол. тр. / Под ред. Д.И. Фельдштейна М-2001 с. 79
7. Геворкян С.Р. Понятие и феномен конфликта//“Научная мысль Кавказа, научный и обществнно теотретический журнал. Приложение N8/76/2005г, с. 56-64.
8. Гришина Н.В. <Психология конфликта>2-е издание, переработанное и дополненное. Питер Пресс» 2008. — 544 с.
9. Дмитриев А.В. Конфликтология: Учебное пособие. - М.: Гардарики, 2000. - 320 с.
10. Емельянов С. М. Практикум по конфликтологии. С.-Пб.: ПИТЕР, 2000 стр215
11. Король Л.Г., Малимонов И.В., Рахинский Д.В. Конфликтология: Ульяновск: Зебра, 2015. – 248 с .
12. Крутько, И. С. Н. В. Попова, Л. Л. Толвайшис Конфликтология в работе с молодежью : учебно-методическое пособие / Екатеринбург : Изд-во Урал. ун-та, 2020. – 196 с.
13. Личко А. Е. Психопатии и акцентуации характера у подростков. Ленинград: 1983г: 126 стр
14. Поливанова, К.Н. Психология возрастных кризисов [Текст]: учеб.пособие для студ. высш. пед. заведений/ К.Н.Поливанова. - М.: Издат. центр, 2000. - 184 с.